ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հելեն Ղազարի Ազարյանի

«Կանանց դեմքի մաշկի լուսածերացման մորֆոֆունկցիոնալ դեգեներատիվ փոփոխությունները եվ դրանց շտկումը» թեմայով ատենախոսությանը ներկայացված բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ԺԴ.00.03 «Ներքին հիվանդություններ» մասնագիտությամբ :

Հայրենական և արտասահմանյան գրականության տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ չնայած դերմատո-կոսմետոլոգիայի վերջին տարիների նշանակալի ձեռքբերումներին այնուամենայնիվ պահպանվում է կլինիկական պրակտիկայում ախտորոշման և շտկման արդյունավետ մեթոդների մշակման և ներդրման կարիքը:

Մաշկի լուսածերացումը (արտաքին, երևութային ծերացում) բազմագործոնային գործընթաց է, որը պայմանավորված է մաշկի հավելուրդային ճառագայթմամբ (ճառագայթման ուժգնություն, երկարատևություն և այլն) և ի տարբերություն մաշկի ժամանակային ծերացումից, կարող է ի հայտ գալ երիտասարդ տարիքում: Դրա զարգացումը կոռելացվում է կյանքի ընթացքում ստացած կուտակային (ընդհանրական, կումուլյատիվ) լուսաչափի հետ:

Մաշկի լուսածերացումը զորեղացնում է արդեն իսկ առկա կամ ձևավորվող մաշկի ժամանակային ծերացման կլինիկական դրսևորումները և զարգանում է առաջանցիկ տեմպերով: Դրա ախտանիշներն առավել ակնառու են մաշկի բաց (լուսանպաշտպան) տեղամասերում (դեմք, վիզ, պարանոց, ձեռքերի թիկնային մակերեսներ և այլն): Այս ամենը զգալի անդրադաձ է ունենում պացիենտների կյանքի որակի վրա:

Ատենախոսի կողմից նախաձեռնած հետազոտության նպատակն է կանանց դեմքի II և III աստիճանի լուսածերացմամբ մաշկի մորֆոֆունկցիոնալ վիճակն արտացոլող դեգեներատիվ փոփոխությունների օբյեկտիվ ուսումնասիրու-

թյունն է և բուժման տարբեր մեթոդների համեմատական արդյունավետության գնահատումը և բարելավումը:

Այս նպատակի իրականացման համար հեղինակը սահմանել է 6 գիտա-գործնական նշանակություն ունեցող խնդիր, մասնավորապես՝ լուսածերացմամբ մաշկի ֆունկցիոնալ, տեղագրական և ձևաբանական փոփոխությունների ուսումնասիրումը բուժումից առաջ և հետո, շտկման տարբեր մեթոդների արդյունավետության համեմատական վերլուծություն, ինչպես նաև կանանց դեմքի II և III աստիճանի լուսածերացմամբ մաշկի բուժման առավել արդյունավետ մեթոդի առաջարկում: Վերը նշված խնդիրների լուծումը, որոնք գիտական գրականության հասանելի աղբյուրներում չեն հանդիպում, և դրանց լուծումը, անշուշտ, որոշում է ատենախոսության առաջադրված նպատակին հասնելը, ինչը համարժեքորեն արտացոլված է սեփական հետազոտությունների արդյունքներին նվիրված գլուխ 3-ում:

Ատենախոսությունը գրված է ավանդական ձևով, հայերեն լեզվով, շարադրված է համակարգչային տեքստի 149 էջերում, բաղկացած է գրականության տեսությունից, հետազոտությունների նյութերի եւ մեթոդների նկարագրությունից, սեփական հետազոտությունների արդյունքներին նվիրված գլխից, եզրահանգումներից, գործնական առաջարկություններից և օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է 156 աղբյուր հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Աշխատանքը պարունակում է 16 աղյուսակներ, 22 նկարներ:

Գլուխ 1 "Գրականության տեսություն" նվիրված է ծերացմանն իբրև կենսաբանական հիմնախնդրին, մաշկի ժամանակագրական ծերացման, լուսածերացման, դրա զարգացման փուլերին, հետազոտման ժամանակակից մեթոդներին, ինչպես նաև մաշկի տարիքային խախտումների շտկման ներարկային մեթոդներին: Հանգամանորեն ներկայացված են լուսածերացման ախտորոշման և շտկամն հետ կապված խնդիրները, տրված կիրառվող մեթոդների դրական և բացասական կողմերը, հիմավորված է դրանդ արդիականացման անհրաժեշտությունը:

Գլուխ II-ում "Հետազոտության նյութը եվ մեթոդները" ներկայացված է հետազոտված կոնտինգենտի (254 կանայք, որից հիմնական 234 և վերահսկման խմբի 20 կանայք) կլինիկական բնութագիրը, ինչպես նաև հետազոտության մեջ ընդգրկման չափանիշները, լուսաձերաձման աշտորոշման և շտկման մեթոդները, տրված է օգտագործված սարքավորման համառոտ տեխնիկական բնութագրերը: Հարկ է նշել որ մաշկի ֆունկցիոնալ, ձևաբանական և տեղագրական փոփոխությունների ախտորոշումը իրականացվել է օբյեկտիվ և ոչ ինվազիվ ախտորոշիչ կլինիկական և գործիքային մեթոդներով: Հայցորդի կողմից օգտագործված են ադեկվատ վիճակագրական մեթոդներ, որոնք հավաստում են հետազոտության արդյունքների արժանահատության մասին:

Ատենախոսության գլուխ III "Սեփական հետազոտության արդյունքները" բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնցից յուրաքանչյուրում մանրամասն շարադրված են երկրորդ և երրորդ աստիճանի լուսաձերացմամբ կանանց դեմքի մաշկի ֆունկցիոնալ, տեղագրական և ձևաբանական փոփոխությունները՝ շտկման տարբեր մեթոդների կիրառումից առաջ և հետո: Այս գլխում նաև ներկայացված է կլինիկական խմբենում բուժման արդյունավետության համեմատական վերլուծությունը մեծաքանակ հավաստի տվյալների հիման վրա: Սեփական հետազոտությունների արդյունքներին նվիրված նյութերում արտացոլված են կատարված աշխատանքների արդյունքները, դրանց համապատասխանությունը առաջադրված խնդիրներին և եզրահանգումներին:

"Ամփոփում" բաժնում հեղինակը սեղմ ձևով ներկայացնում է աշխատանքի հիմնական դրույթները, որոնք թույլ են տալիս ներկայացնել ատենախոսության էությունը և իրականացված կլինիկական դիտարկումները ներդրված մեթոդների կիրառման արդյունավետության վերաբերյալ, վերջիններիս նախընտրությունը համապատասխան կլինիկական խմբերում: Եզրահանգումները բացարձակապես հիմնավորված է եւ արտացոլում են ատենախոսության դրույթները հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում և զեկույցներում:

Հետազոտական աշխատանքի հիմնական կարևոր եզրահանգումներից է կայանում նրանում որ բոլոր հետազոտվող ցուցանիշներում երկու խմբերի

պացիենտների մոտ բարելավման առավելագույն արդյունքը գրանցվել է ՄՀ+ ԹՀՇ-ով համալիր բուժման դեպքում:

Աշխատանքի հիմնական գիտական նորույթը կայանում է հետևյալում՝

1. Առաջին անգամ համալիր ուսումնասիրվել են կանանց դեմքի II և III աստիճանի լուսածերացումով մաշկի ֆունկցիոնալ, տեղագրական և ձևաբանական փոփոխությունների քանակական ցուցանիշները օբյեկտիվ մեթոդներով:
2. Առաջարկվել են կանանց դեմքի II և III աստիճանի լուսածերացումով մաշկի դեգեներատիվ փոփոխությունների շտկման արդյունավետ և ռացիոնալ մոտեցումներ:

Գործնական նշանակության դրույթները՝

1. Հետազոտման ոչ ինվազիվ գործիքային մեթոդները հնարավորություն են ընձեռում գնահատել մաշկի մորֆոֆունկցիոնալ վիճակը և բուժման կիրառվող մեթոդների արդյունավետությունը:
2. Բուժման համակցված մեթոդի կիրառումն ապահովում է սեղմ ժամկետներում ցանկալի առավելագույն արդյունք՝ բարելավելով բուժառուի կյանքի որակը, առողջ տեսքը:
3. Մշակված է կանանց դեմքի մաշկի II և III աստիճանի լուսածերացում ունեցող պացիենտների ախտորոշիչ հետազոտությունների արդունքների հիման վրա թերապևտիկ միջոցառումների առավել արդյունավետ մեթոդ:

Հետազոտության արդյունքները և հեղինակի կողմից տրված գործնական առաջարկությունները լայն կիրառություն կգտնեն դերմատո-կոսմետոլոգիական պրակտիկայում, ինչը, մեր կարծիքով, իր դրական ազդեցությունը կունենա մաշկի մորֆոֆունկցիոնալ դեգեներատիվ փոփոխութունների շտկման արդյունավետության և զգալի կոնտինգենտի կյանքի որակի վրա:

Աշխատությունը շարադրված է գրագետ լեզվով, ընթերցվում է հեշտությամբ և հետաքրքրությամբ, պարունակում է բարձր որակի ցուցադրական նյութ, իսկ ներկայացված տվյալները պարունակում են էական գիտական և գործնական արժեք:

Ատենախոսության թեմայով հրատարակվել է 5 գիտական աշխատանք՝ այդ թվում WOS գիտական հրապարակումների շտեմարանում ներառված ամսագրում, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 4 հոդված, որոնցից 2-ն առանց համահեղինակների, և 1 թեզիս: Դրանցում լիարժեք ներկայացված են Հելեն Ղազարի Ազարյանի ատենախոսական հետազոտության արդյունքները: Հոդվածների նյութերի հավաքագրումը, մշակումը, վերլուծությունը, եզրակացություններն անձամբ հայցորդի գիտական աշխատանքի արդյունքն են: Աշխատանքի բովանակությունը ներկայացված է ՀՀԱզարյանի կողմից "Դուբայ Դերմա-2019" Միջազգային Գիտական համաժողովին: Ատենախոսությունում առաջարկված մեթոդի վերաբերյալ ՀՀԱզարյանը ստացել է հեղինակային իրավունքի արտոնագիր:

Ամփոփելով վերը նշվածը, կարելի է նշել, որ հետազոտական աշխատանքը իրականացված է կլինիկական և մեթոդաբանական տեսակետներից ճշգրիտ, հիվանդների ընդգրկումը և հետազոտությունները կատարվել են առաջադրված խնդիրներին համապատասխան:

Հաշվի առնելով ատենախոսական աշխատանքներին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջները՝ նկատողությունների առումով հարկ ենք համարում նշել հետևյալը:

1. Հեղինակը բաց է թողել "տեսական նշանակություն" բաժինը, չնայած, մեր կարծիքով, աշխատանքում առկա են մի շարք տվյալներ, որոնք պարունակում են ժամանակակից դերմատոկոսմետոլոգիայի համար համար էական տեսական արժեք:
2. "Հետազոտության նյութը եվ մեթոդները" գլխում, մեր կարծիքով, սակավ ուշադրություն է դարձվում հիվանդների վերահսկողական խմբի նկարագրությանը, ինչպես նաեւ կլինիկական խմբի հիվանդների սոմատիկ կարգավիճակին:
3. Չնայած հեղինակի կողմից իրականացված տվյալների վիճակագրական մշակման ընդարձակ ծավալին, աշխատանքում պատշաճ կերպով նեկայացված չե դրա նկարագրությունը:

4. Ատենախոսության մեջ առկա են որոշ տեխնիկական վրիպակներ, ինչպես նաեւ ոճաբանական եւ քերականական սայթակումներ:
5. "Գործնական առաջարկներ" բաժնում ավելի տրամաբանական կլիներ ներկայացնել հետազոտված պացիենտների մաշկի լուսածերացման տարբեր դրսևորումների ախտորոշման և շտկման ալգորիթմը

Միաժամանակ նշված դիտողությունները չեն կրում սկզբունքային բնույթ եւ ոչ մի կերպ չեն նվազեցնում գրախոսվող աշխատանքի արժեքը :

Ամփոփելով գրախոսությունը՝ կարելի է եզրակացնել, որ ատենախոս Հելեն Ղազարի Ազարյանի՝ "Կանանց դեմքի մաշկի լուսածերացման մորֆոֆունկցիոնալ դեգեներատիվ փոփոխությունները եվ դրանց շտկումը" թեկնածուական ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է, ունի գիտագործնական մեծ նշանակություն դերմատո-կոսմետոլոգիայի կլինիկական գործունեության ոլորտում, համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին և կարելի է ներկայացնել հրապարակային պաշտպանության:

Պաշտոնական ընդդիմախոս,
ԵՊԲՀ-ի ներքին հիվանդությունների
պրոպեդևտիկայի ամբիոնի վարիչ
բժշկական գիտությունների դոկտոր՝ Ջնդոյան Զ.Տ.

Զ.Տ.Ջնդոյանի ստորագրությունը հաստատում եմ
գիտքարտուղար բ.գ.դ. Պրոֆեսոր Ավագյան Տ.Գ.

05 հունիսի 2022թ.